Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Մեծամորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ 4 դաստիարակի՝ 0,56 դրույքաչափով, մեթոդիստի՝ 0,25 դրույքաչափով, երաժշտական դաստիարակի՝ 0,5 դրույքաչափով թափուր պաշտոնները համալրելու համար:

Վերոհիշյալ պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում (Ձև 1)

2. կրթության մասին փաստաթուղթ՝ դիպլոմ

3. անձը հաստատող փաստաթուղթ

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ

5. ինքնակենսագրություն (Ձև 4)

6. լուսանկար 3x4 չափի

7. այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են զինվորական գրքույկ,կամ զինվորական կցագրման վկայական

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

10. որակավորման տարակարգ (առկայության դեպքում)

Փաստաթղթերի պատճեններն անհրաժեշտ է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունիսի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից -16:00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կանցկացվի 2025 թվականի հուլիսի 4-ին՝ ժամը 14:00-ին, «Մեծամորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքում, հասցե՝ գ. Մեծամոր, Խ. Աբովյան փ. 1/2:

Տեղեկությունների համար զանգահարել 094 18-98-82 հեռախոսահամարով: